նաց պարտիզի մէջ, իսկ այն աւանդութիւնն իբր թէ Գառնիկին յայտնուեցան ս. Նշխարներն Ե. դարի վերջում, ինչպէս յետոյ կըտեսնենք, սխալ է։

Թորդան աւանը Դարանաղեաց գաւառում և Թիլն աւանն Եկեղեաց գաւառում երկու նշանաւոր կէտեր են, որոնք որոշում են Ս. Լուսաւորչի կալուածքի ընդարձակութիւնը. նոցա մէջ տեղն է Սեպուհ սարը, որ իսկապէս Ս. Լուսաւորչի կեանքի վերջին օրերի համար յաւերժական մի յուշարձան է Հայաստանում. Սեպուհի վերայ քայլ չկայ, որ չստիպէ մեզ մտաբերել Ս. Լուսաւորչի երկրաւոր կեանքի զանազան վայրկեանները։ Նորա հարաւային ստորոտները ողողուում են Եփրատի ջրերով, արևելքից հոսում է Գայլ գետը, արևմուտքից Գոմեր. այդ երեք հովիտների հետ խառնուում են Սեպուհի ընդարձակ ձորերն ու ձորակները՝ որոնց մէջ և զահուած են պէս յիշատակներ։ Արդէն յայտնի է թէ Ս. Գրիգոր դեռ իբրև սպասաւոր Տրդատ արքայի որպիսի՞ անտանելի տանջանքեր կրեց Գայլ գետի վերայ Երիզայ աւանում. ապա երբ Հայոց հովիւ ընտրուեցաւ, ինչպիսի՞ եռանդով խորտակեց կեց կործանեց Երիզայի անահտական, Թիլն աւանի նանէական և Թորդանի՞ սպիտակափառն Բարշամինայ դից մեհեանները*. յետոյ իւր հովուապե-

* Տես Հայոց Եկեղեցական կրօնը, 1873 Վաղարշապատ.